

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

7/498



ԴԵՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆ





8498




ԴԵՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

Դ հայ

ԾԱՆՈԹՆԵՐ

A-123333

ՀԱՆԳԱՄԱՆՑ, ԵՇԵԼՈՒՆ,  
ԽՆԱՄԻՆ, ԿՐԱՍՆԱՐՄԵՅՑ  
ԿԱՑԱՐԱՆԻ ԱԿՈԲԸ.



№ 2.

„ՀԵՐՄԵՆ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927.

## ՀԱՆԳՍՏԻ ՏԱՆՅ

Ամառը՝ լիալեցուն մի զետ՝ ստինքներն ուղղած հասում է, ծավալվում է տիրականութեն։ Հողը պտղաբերում է, ու կատաղել է, խանդում է, խելագարվում։ Ողի մեջ հասունանում է արևի կենարար հյութը—մի բուրալից ջերմություն, վոր շնչառության հետ ըմպվում է, յերակներն ուղղնում, տանջում կյանքի ուրախությամբ։

Ծանր հեռում է բերանաբաց ձորը։ Մինչ ճեռվում թևատարած արծիմների պես ճախրում են լեռները։ Շոգ է։ Յեվ անտառը աչքը կպցը նում է ծուլորեն։

Անտառի կանաչ դռների մոտ մի ճերմակ տուն—բանվորների հանգստի տունը—ինքն իսկ հանգստանում է պարտեղով գրկված։

Խոհանոցից հանգիստ չխկոցներ են դալիս միայն դափնետերնի բուրմունքի և մսի ճենճանոտի հետ։ Յեվ ուրիշ վոշինչ—ամենքը քաշվել են ուր վոր։

Տարորինակ ստվերներ են անտառում։ Հաղեցած մթություններ։

ՏԵՐՄԵՍ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29  
ԳՐԱՌԵԴ. 103Բ  
ՏԻՐԱԺ 1200.

Ահա մի բացատ՝ արեի վոսկի լիճը մեջը  
կուռ ե այնտեղ ևս։ Մեղուներն են միայն—  
պստիկ այերոպլաններ—վոր բզզալով ծառերի  
արանքում՝ ողից հետախուզում են ծաղիկները։

Այդտեղ, հենց այդ քնքույշ ծաղիկների ու  
խոտերի մեջ են հաճախ գալիս վեր թափվում  
բանվորները՝ մետաղի թագավորությունից դուրս  
յեկած կոպիտ, ծուռ ու մուռ եակներ և սկսում  
են ծխել ու ցածր խոսել։ Բրոնզի թափվածքների  
պես հանգիստ ու մոայլ են նրանք։ Թողել  
են աշխատանքի ռազմաճակատը առ ժամ, յեկել  
կրակի յերկրորդ գիծը։

Կըհանգստանան, ու ելի—հարձակում։

Նրանց հետ Սարգիսն ել ե յեկել։ Յեկել ե  
քաղաքից—այսինքն տպարանից, վորովհետեւ նրա  
քաղաքը տպարանն ե, այնտեղ ե անցել իր  
վողջ կյանքը։

Յեվ հիմա յեկել ե ամարանոց հանգստա-  
նալու։

Անսովոր նորություն։

Վարպետ գրաշար ե։ Լավ ե «Քշում» ձիու-  
պես։

Ծանր եր շարժվում միայն նրա ընտանիքի  
դործերը։

Հայր, մայր, քույր, յեղբայբներ, սրանց յե-  
րեխաներից բավականին, —ինքը մեջը 55 տա-

րեկան՝ ամուրի։ Գեղեցիկ տղամարդ եր։ Հիմի  
ներկը տված պատկեր ե, տեղ-տեղ նախշուն,  
տեղ-տեղ խունացած։ Ասենք գեղեցկության հետ  
հաշիվը վաղուց ե փակել, այսինքն՝ հաշիվ չի  
ունեցել։ Հա սրան պահի, նրան հազցրու, մե-  
կին թաղի, մյուսին պսակի։ Նորոգելով հորը,  
կարկատելով մորը—խարխուն շինություններ—  
մինչև քույրերին ամուսնացրեց, ճամբեց—մտիկ  
տվեց վոր աշխարհը ուրիշ բան դառավ։ Հետո  
յել կուսակցական կազմակերպություն, բանտ,  
բան։ Հեղափոխությունն ել յեկավ թևից քաշեց  
զցեց կատաղի շուրջպարի մեջ։ Յեվ ահա աչքը  
բացեց վոր՝ տարիները չկան։ Ծերացավ, այն-  
պես, վոտի վրա, ի միջի այլոց։

Հիմի լավ ե։

— Հը՞, Սարգիս, «շարում» ես,—կաստ-  
կում են յերիտասարդ ընկերները։

— «Քանդում եմ» դեռ,—ասում ե Սար-  
գիսն ու աչքով անում, «Իին կարգերի» կողմը  
իբր թե...։

Ու այս «շարում ես, քանդում ես»-ը կա-  
տակի խոսք եր դառել նաև հանգստայան տան  
բանվորների համար։

Հիմի Սարգիսը բնության հյուրն ե։  
Ահա նստել ե անտառի բացատում, մեջը  
հաստարմատ ծառին՝ շուրջն ե դիտում։ Բնու-

թյունն աշխատում ե զարմանալի հոգածու հաշվով։ Տունդ չքանդվի, այ քեզ տնտես։ Ինչ ել հարուստ ե անիծածը։ Բաց ե արել պահեստները, լցնում ե հաղար ու մի բարիքով։ Մառանները տնքում են. յերկրամեջի նկուղներում դրած ե մետաղեղենը, քիմիական բաղադրությունները, լույսը, նրա մակերեսույթի վրա աճում ե հացը, պտուղը, նյութվում հագուստը...

Իսկ վերը։ Ի՞նչ անսպառ լույս ու ջերմություն։ Այ լամպ։ Սրա նավթը յերբ կըհատնի վոր...

Սարդիսը նոր ե նայում այս ամենին։ Տըպարանից առաջին անգամ յեկել ե բնության տունը։ Հիմի նայում ե, հասկանում ե, վոր սա իր տունն ե։ Բայց լավ չի զգում։ Ի՞նչ վոր շշմածի պես ե։ Ի՞նչպես նոր շոր հաղած մարդ, վոր ինչ վոր անհարմար ե նստում—վեր կենում։ Մի քիչ խանդաղատված ե իրեն այստեղ ուղարկողների հանդեպ։ Հասկանում ե, վոր լավ բան ե «ընկերներ» ասածը։ Զհանդամը, քեփարա։ Ո՞վ ե խանգարում հիմա բարիքներ աշխատել, բարիքներ վայելել։ Գիտե ի հարկե, Բայց մի ծանր հոգնություն, քարի պես նստած ե նրա ուսերին։

Իր անցյալը... Ո՞ւր կըփախչես նրանից... Յեվ ի՞նչ եր իսկապես այդ անցյալը,

Քառասուն տարի—առջեր տառերի կասսա, կողքին մի պատուհան՝ կեսը գետնի մեջ։ Յեվ նա շարում եր ու կողքանց նայում պատուհանից դուրս։ Ահա այդ պատուհանն ե յեղել շարունակ իր և կյանքի միջև։ Այնտեղ, դրսի աշխարքից—մայթից միայն մարդկանց վոտներ եյին յերեսում։ Քայլում եյին այդ վոտները, քայլում արագ, գանդաղ։ Քայլում ամեն տեսակի վոտներ։ Յերբեմն ել հրաշալի կոշիկներ նազելի վոտներով։ Ի՞նչ կյանքեր կային այդ գեղեցիկ վոտների մեջ։ Յեվ այդ բոլորը գալիսանցնում-գնում եյին։ Ու ելի գալիս, անցնում, գնում։

Ի՞նչպես վոր իր ձեռին ել տառերը՝ գալիս, շարվում գնում եյին։

Դրսենում կյանք կար, բնություն, ամառանց, արե։ Բայց ինքը միայն շարում եր։ Շարում եր տառեր, և մեքենայաբար, առանց ուշդարձնելու իմաստի վրա։

Ի՞նչ եյին տոռեմ այդ տառերը...

Իսկապես վոր... Ի՞նչ եր իմաստը այն ամենի, վոր նա շարում եր քառասուն տարի։ Միտը չի։ Ո՞վ ե իմանում։ Ի՞նչ վոր պատկերներ, վեպեր, վոտանավորներ։ Մինը սիրում եր, մյուսը ձանձրանում և վորոնում, և յերրորդը կարոտում եր, չորրորդը յերջանիկ եր։

Բնություն, գարուն, սեր, սեր, բնություն, գարուն... Ուզեց ինքն ել սիրել: Միտը չի: Ժամանակ չկար:

Նա շարում եր, շարում, շարում:

Իր կողքով ել պատուհանի մոտով, անցնում եր աշխարքը: Անցնում եր գեղեցիկ աշխարքը: Յեվ ինքը նայում եր կողքանց, այնպես, աչքի տակով:

Ու շարում, շարում...

Յեվ ահա հիմա, անտառի բացատում, ընկույզնու տակ ինչ վոր հեռավոր բան և հիշում: Հեռվում, շատ հեռվում հիշողության մեջ մի բան և խլրում: Կամաց-կամաց հիշում և թե ինչ:

Ինքը աշխատում եր: Պատուհանի մոտ կանդնեց աղջիկների մի խումբ, և վորսկեսղի լավ տեսնեն ներսը, հետ-հետ զնացին դեպի փողոց: Բոլորն ել հասարակ՝ ինչպես ծաղիկներ: Զքավոր թաղերից եյին: Տպարանում վոչ-վոք չկար այդ պահին: Աղջիկները չարաճճի հետաքրքրությամբ ներս նայեցին: Սարգիսը կողքանց մտիկ տվեց նրանց: Մեքենական հայոցք: Աշխատանքը կանել եր նրան: Պետք ե «մեքենայի տակ գցեցին»: Բոպե ժամանակ չկար: Մըմռում եր, բարձրաձայն հեգում ու շարում եր: Բայց աղջիկները կանդնած եյին դեռ: Ծիծաղում եյին: — Վայ, զիրք են տպում:

Սարգիսը նայեց նրանց և մի վայրկյան աչքը կանգ առավ նրանցից մեկի աչքերին: Սկսակ, շեղ աչքեր եյին, պարսկական նկարների մեջ պատահող, այծյամի աչքեր:

Աղջիկները նայում ելին տպարանի առարկաներին ու կատակում:

- Ի՞նչ գեղեցիկ մեքենա յե:
- Ի՞նչն ել:

Մինչ Սարգիսը կընայեր՝ աղջիկները քըրքջացին ու հեռացան չարաճճի առուների պես: Միայն «այծեմնիկը» մի անգամ ել հետ դառավ, ատամներով ծիծաղեց ու «ծիկ» անելով փախավ:

Ի՞նչ յեղավ այդ աղջիկը: Միտը չի: Ժամանակ չեղավ այդ մասին մտածելու, սկսելու սիրել մի քիչ: Իր շարած տառերի տակին կյանք կար—գլխի չընկավ: Քառասուն տարի այդ կյանքը ներս եր նայում ոլատուհանից—այն աղջկա պես: Բայց ինքը կողքանց նայեց ու կորցրեց:

Թռավ կյանքը ծտի պես...

Յեվ հիմա աչքերը խոտերի մեջ նայում ե: Միրտը լցված ե: Ահա տարորինակ միջատներ մազլցում են ցողունների վրա և հասնելով ծայրին՝ հանկարծ թրթոռում են ու նետիկների պես սլանում ողի մեջ: Հազար պստիկ մեղուներ ու հսկա բղեղներ ձգում են իրենց ջութակները:

Մըջունները կրում են հա կրում։ Ի՞նչ հապ-  
ճեպ, ի՞նչ շտապանք՝ ապրել, ապրել։ Յեվ աշ-  
խատիւմ են, թէ ապրում։—Յերկուսն ել։ Արել  
թափում ե նրանց վրա իր նարնջագինին, հար-  
բեցնում մինչև գժություն։

Գինով ե և Սարգիսը... Յերազում ե։  
Ի՞նչ կըլինի, ի՞նչ կասես՝ յեթե կարելի լի-  
ներ հետ կանչել նրան—այն ծիծաղով լի աղ-  
ջկան։ Յեվ ի՞նչպես ուշ չըդարձրեց նրան։  
Տեսնես վորտեղ ե հիմա...»

Հագի՞ր հիմա յերկաթե տրեխներ, առ ձեռդ  
յերկաթե գալազան, գնա ընկեր աշխարքե  
աշխարք, վնարի՞ր վոր գտնես նրան։ Լուր ուղար-  
կիր, թող դա։ Այսորվա պես, այն որն ել չե-  
տը բերի։

Մի վայրկյանում կորցրեց նրան ասեղի պես։  
Տառերի պես շարեց ու քանդեց կյանքը  
ուրիշների համար և կյանքից միայն տառերն  
ընկան ձեռը։

Յեվ կոշտեր մատների վրա...»

Սարգիսը հառաչեց։

Արդեն ճաշի զանգը տվել եյին։ Զեր լսել։  
Նստած եր նա ծառի տակին, հիսունհինգ տար-  
վա կուզը ուսին և աչքերը չուած, կարծես ու-  
զում եր զուրս պլծնել այդ բեռի տակից։  
Անցյալի բեռի։

Յեվ ի՞նչպես ապրել ե ուզում նա իր յերի-  
տասարդ ընկերների նման։ Հիմա կարող ե, հի-  
մա ունի իրավունք։

Ուշ հասավ «Անիրավը»։  
— Սարգիս, Սարգիս,—ձայն տվին նրան,—  
ճաշ ե, արի։  
— Հը, ի՞նչ կա, —զարթնեց նա։  
— Արի ե՛, ճաշ ե։  
Մի ձայն կատակեց հեռվից.  
— Հը, «շաբում ե՞ս»։  
— «Քանդում եմ», —մըմոաց նա ու վեր  
կացավ։

## Ե Յ Ե Լ Ո Ն Ը

Նրա վորդին՝ Նիկոլը՝ 1920 թվից դեսը չը  
կար, չեր յերեռւմ:

— Կըգա, մենակ ճամբաները վոր կտրված  
են, դրա համար լուր չըկա:

Ուրիշ ի՞նչ կարելի յեր ասել մի խեղճ մոր,  
վորի միակ վորդին գնացել ե պատերազմ, հինգ  
տարի յե չի յերեռւմ:

Մայրը հանգիստ չունի այն որից, յերբ իր  
Նիկոլին տարան, այդ խեղճ ու կըակ ատաղձա-  
գործին, վոր մինչև վերջին որը ուրագը ձեռին,  
վոտի վրա գործ եր անում՝ կարկատելով պստիկ  
խանութներ, նեղիկ դռներ, աթոռ, սեղան...

Նրա կերպարանքը դեռ յերեակայության  
մեջ տպված ե. Նիհար, նրբակազմ մի տղա,  
թախծալի, մտերիմ ժպիտը աչքերի մեջ, Յեվ  
անխորս: Միայն կըժպտար, Բան ասելիս ել մեղմ,  
անլսելի:

Նրանից վոչ մի գանգատավոր չի յեղել քա-  
ղաքում: Այդ գավառական քաղաքի չքավոր  
ծայրամասերը շատ լավ եյին ճանաչում բարի  
Նիկոլին: Տուն չի յեղել, վորին մի բանով ոգ-

նած չըլիներ. Դուռ եր կոտրած լինում, պա-  
տուհանի փեղկ, որորոցի վոտ՝ յեթե չքավոր  
տեղ եր՝ Նիկոլը մի արանք կըդտներ, կըդար ձրի  
կըշիներ:

Յերեկոները դործից կըդար տուն, կըլվաց-  
վեր, հարսի պես կընստեր դուան առջևի քարին  
ու լուռ կընայեր հեռուն, մինչև մութն ընկնելը:

— Նիկոլ, արի, հացը գցեցի:

Վեր կըկենար ու ներսը մոք հետ կընստեր  
համեստ ընթրիքի:

Մայրը կըխոսեր, կըպատմեր, բացատրեր՝  
Նիկոլը ականջ կըդներ:

Չեր խոսի: Միայն մեղմ կըժպտար:

Ահա այդ Նիկոլին եր, վոր տարան պա-  
տերազմ, ու կորավ:

Մնաց մայրը ու պստիկ տնակը — դատարկ  
լուցկու մի տուփ՝ մի դուռ մի պատուհան, յեր-  
կաթուղու կայարանի մոտ:

Մայրը չեր իմանում թե ում դիմի, ումնից  
տեղեկություն ստանա իր վորդուց: Հարցըել եր  
քահանային, ծանոթ խանութպանների, կայա-  
րանում մեքենավարներին, դպրոցի ուսուցչին:

Ասել, բացատրել եյին անորոշ բաներ — միտքը  
չի մնացել: Չի հասկացել: Յեվ հիմա ի՞նչ պի-  
տի անի, այդ ել չըգիտե: Իհարկե ամենքին խո-  
սեցնում ե, վոր մի նշան, մի հնար յերեա:

— Հիմի, տիկին,—ասաց մի գրագիր ղրապուավիլան եսպես ե։ Դու պիտի գտնես տղայիդ չաստը, թե վոր դիվիզիան, վոր պոլկն ե յեղել։ Մի զայավլենի կըտաս վոյենաչալնիկին...  
Շատ բարդ ե...

Յեվ. մայրը տխուր նայում ե գետնին և պուխը ցնցում։

Մի միլիցիոներ ել այսպես բացատրեց.

— Եսպես ե, մերս, եղ զորամասը Ղարսից քաշվել յեկել ե Լենինական, ու ենտեղից կամ Ղարաբիլիսա յե անցել կամ Յերևան, թո տղեղ ել հետները յեկած կըլինի։

— Հա, յեկած կըլինի։

Ու մայրը հրահրվում ե մի զաղտնի հուսով։

— Հա, թե վոր յեկած լինի, եղտեղերք յեկած կըլինի։

Ղարեան կանայք ել վրա յեն բերում.

— Ուր ե, ուր չե՞ վերջը վերջը կերև, Յերևի ճամբա չըկա։

Ուր զաղտնի իրար են նայում աչքի տակով։ Բայց անցնում են որեր, իրա վրա դարսը վում, դառնում ամիսներ, ամիսները դաւնում տարի...։

Միշտ միևնույն բանը—վոչինչ չի փոխվում այն բանից, վոր նիկոլը չըկա։

Ու հարեան կանայք դադարում են նրա մասին խոսելուց։

Նա յել չի խոսում։

Հասկանալի բաներ կան, վոր յեթե խոսվեն դառնում են անհասկանալի։

Ու տեսնելով խեղճ կնոջ իրարանցումը, կայարան գնալ-գալը, հարց ու փորձը, հարեանուհիներից մինը մի որ նկատեց.

— Մերս, եղպես գնալով գալով մի բան դուրս գա վոր.—

— Հա... Համա ով դիտե...։

Ցույց ե տալիս վոր հույսը կորցրել ե, բայց իր մեջ չի կոտրում, ընդհակառակը շոյում, մեծացնում ե այդ հույսը։

Ու յերբ կայարանից կամ ուրիշ փողոցներից վերադառնում ե տուն՝ կրակ ե անում, կերակուր դնում վրան, նստում կողքին գուլպա գործում. և սպասում նիկոլին։

Այդպես լավ ե։ Այ ամեն ինչ պատրաստ ե։ Ուրիշ ել ի՞նչ ե մնում վոր իր տղան գա տունն իհարկե վոչինչ։

Գնացքները գիշեր-ցերեկ դդրդալով գալիս անցնում են փոքրիկ տնակի տոջեռվ։ Ամեն ազգի, սեռի ճամբորդներ վժվժում են վագոնների պատուհանների մոտ։

Մայրը նստում ե գոտնը, պաղ քարին ու

մտիկ ե տալիս գնացքներին՝ աչքերը լի մշուշով  
ու թախիծով:

Վազոններից մարդիկ են դուրս գալիս:  
— Հը, են մեկը Նիկոլը չե...

Սիրտը թբթում ե, գուլպան վայր ե դը-  
նում ու շտապում կայարան:

Ճամբորդների աղմկահույզ ամբոխը մի  
կարճ ժամանակ իրար ե անցնում, գոռում,  
վազվում ու նորից շոգեմեքենան սուլում ե,  
նորից կայարանը դատարկվում...

Մայրը հառաջում ե, մի քիչ ել կանգնում,  
նայում գնացքի յետելից, ապա դառնում տուն:  
Նա չի հուսահատվում: Ճամբին քաղցրացնում ե  
յերեակայությունը—և դա արդեն սովորություն  
ե դառել—յերազում ե, վոր իր վորդին քաղա-  
քի ուրիշ ճամբով ե յեկել տուն:

Հեռվից նայում ե՝ արդյոք դուն մոտ մեկը  
կանգնել՝ իրան սպասում:

— Ներս մտած լիներ...

Բայց ե անում դուռը.

— Նիկոլ...

Վոչ վոք, Սենյակը դատարկ ե, ինչպես միշտ:  
Դե նա դիտե այդ: Բայց այդ ամենը նրա  
ամենորյա զբաղմունքն ե, գործն ե, վորով լրց-  
նում ե նա իր գոյությունը:

Մայիսի վերջերքն եր: Դաշտերը ժպտում  
եյին իրենց կանաչ աչքերով:

Ինչ վոր ձայներ հեռվից կանչում եյին  
ում վոր, չես իմանում ինչու:

Մի կարմիր բանակային եշելոն եր—յեկել  
կայարան և հանգստանում թե հերթի յեր սպա-  
սում, վոր ճամբան շորունակի ղեղի լաղեր:

Նիկոլի մայրը՝ հնադանդ իր սովորության  
քայլերն ուղղեց դեպի կայարան, դեպի անսովոր  
աղմուկը:

Եշելոնը իր ձիերով, խոտերով, յերիտասարդ  
ճայներով կայարանից քիչ հեռու տարածության  
մեջ ժամանակավոր կյանք եր սկսել: Հարյուրա-  
վոր շիկահերու սյավ գլուխներ եյին վժվժում  
վագոնների շուրջը: Մատաղահաս կարմիր բա-  
նակայինները ծիծաղում, իրար բոխում, իրար  
գլխի բամփում, հրհում եյինց Վոմանք գործ  
եյին անում:

Ահա մի սեաչյա կարմիր բանակային քըր-  
տինքը թուխ այտերից կաթեցնելով դույլը ձե-  
ռին գնում եր ջրմուղից ջուր առնելու:

Նիկոլի մայրը կանգնեցրեց նրան.

— Տղա ջան, կեցի քեզի բանը հարցնեմ:

Կարմիր զինվորը կանգ առավ, բայց ան-  
համբեր ու շտապով հարցրեց.

— Ի՞նչ կա:

- Ոտացդ մեռնիմ, ախը մեր նիկոլը...  
նիկոլը եստեղ չե:
- Նիկոլը, ազգն ի՞նչ ե:  
կինը լարվեց.
- Ազգը: Ազգը Խաչատուրյանց ե:  
կարմիր զինվորը մտածեց մի քիչ.
- Խաչատուրյանց: Վոր վաշտն ե:
- Զիտեմ:
- Խաչատուրյանց:
- Ու դարձավ դեմից յեկող մի ուրիշ կարմիր  
զինվորի.
- Սեթու: Խաչատրյանց ով կա գնդում:  
Ուրիշները վրա յեկան.
- Ում ե հարցնում: Խաչատրյանց: Նիկոլ:  
կարմիր-բանակայինները յեկան շրջապատե-  
ցին: Ու մտածում են.
- Ո՞վ պիտի լինի:  
Սեթոն հարցըեց.
- Վաշտը չըգիտես:
- Ի՞նչ գիտնամ, վո՞չ ճար գիտեմ, վո՞չ  
ճամբա: Անունը Նիկոլ ե, Խաչատուրյանց, կոն-  
սիստորի թղթին մեջ Ղարեբյանց—Խաչատուր-  
յանց ե:
- Տղերք,—դարձավ Սեթոն դեպի վագոն-  
ները,—Նիկոլ Խաչատուրյանց վոր վաշտում կը  
լինի:

- Մի լուրջ գունատ դեմք դուրս նայեց վա-  
գոնից.
- Խաչատուրյանց յես եմ, ով ե հարցնողը:  
կինը աչքը սևեռեց այն կողմը և վախեցած  
նայեց.
- Չե, ան չե,—խոսեց ինքն իրան կոտըր-  
ված: Առաջուց գիտեր թես, բայց ելի հույս ու-  
ներ: Ո՞վ գիտե, գուցե...
- Գնդի մեջ ուրիշ Խաչատրյանց չըկա,—  
ասաց Սեթոն սիրտը կոտրած մորը: Եղակես ե  
չե, տղերք:
- կարմիր-բանակայինները գլուխները կասկա-  
ծով թե բացասաբար շարժեցին.
- Չե, չըկա:
- Ու լոեցին:
- Գունատ կարմիր-բանակայինը վայր իջավ  
վագոնից ու մոտեցավ կնոջը.
- Յերբ ե ծառայության մտել:
- Հինգ տարի կա:
- Հինգ տարի... Եղ ասել ե՝ հին բանա-  
կութիւն յեղել: Ուր ե գնացել:
- Ղարսա կողմերը:
- կարմիր բանակայինները հաղիվ զսպելով  
իրենց ծիծաղը՝ միայն ժպտացին:
- Ե, ի՞նչ ենեմ, հինգ տարի յե կըսպասեմ,  
կըսպասեմ թե կերեա հա կերեա՝ հեշ չի երեա:

— Թիֆլիդ, Բագու, Յերևան հարցը եւ ես—  
ասաց գունատ կարմիր-բանակայինը:  
— Ե՞ս:

— Ու հինգ տարի յե սպասում ես թե վոր-  
դիդ դա տուն...

Մայրը շրթունքները ծռմռեց ու սկսեց հե-  
կեկալ:

Կարմիր բանակայինները ժպտալով մտիկ  
տվին նրան և չեյին իմանում ի՞նչ անեն:

Մի ուրիշ կարմիր բանակային մոտեցավ ու  
կոր յերեսը ընկերների ուսերի արանքով կաս-  
կարմիր գնդի պես ներս խոթելով՝ խզեց լռու-  
թյունը:

— Հա, ի՞նչ կա:

Բացատրեցին:

— Իիի... Տղեղ մեռած կըլի, մերս, զուր-  
մի սպասի: Տղեղ ել վերջացավ, են բանակ ել,  
են հին բանակ եր... Հիմի նոր բանակ ե:

— Կարո,— աչքով արին մյուսները:

— Զանըմ, թող լա, սիրտը իջնի: Հապա-  
բնչ: Մեռավ մեռավ: Սաղ ըլիմ յես:

Սեթոն հրհուց ու բոռնցքով խփեց կարո-  
յի մեջքին.

— Հայ սատկիս դու:

— Խաչ: Սաղ ըլինք յես, դու, մենք:

Կարմիր բանակայինները բարձր ծիծաղեցին,

իսկ կինը լաց եր լինում:

Մի ծանը քար, վոր ահա հինգ տարի յե  
նստած եր նրա սրտի վրա՞ շուռ յեկավ հիմաւ-  
թեվ յեթե նա բաց արեց իր վորդու գերեզմա-  
նը, բայց մյուս կողմից ել «նա» ընկավ նրա սրտից,  
հեռացավ: Աշխարքը դառավ մի դատարկ բան,  
չքացավ ինքն ել, ու թեթևացավ.

— Ել ի՞նչս մնաց...

— Ի՞նչը, մնաց աշխարքը:

Կարմիր բանակայինները նորից հրհուցին:  
Գունատ կարմիր բանակայինը, վոր կարեկ-  
ցությամբ նայում եր կնոջը՝ մեղմեց մի փոքր:

— Մի նեղանա, մայրիկ, հանաք ե անում:  
Քո վորդին գնաց, մենք ել քո վորդիքն ենք:

— Եդ ել դրուստ ե,— ծիծաղեց կարոն,—  
մեկը չըլի՞ հազարը ըլի: Այ տես—ու կարոն  
գնդակը հանելով բամփեց բոլորի գլխին—սրանց  
գլուխը թաղեմ, սրանք բոլորն ել քո վորդիքն են:

Կինը աչքերը սըլեց ու հառաչեց.

— Հըլպը՞թ որ... սաղ ըլիք դուք:

— Հեծ դարդ մի անի, մերս,— կատակեց  
կարոն—մի բան վոր պատահի՝ այ եսպես հուպ  
կըտանք: Յեվ հուպ տվեց Սեթոյի վիզը:

— Վայ, վայ, վայ, տո, կամաց—ծվաց Սե-  
թոն ու վիզն ազատելով ընկավ փախչող կարո-  
յի յետեից:

Կարմիր բանակայինները ծիծաղելով նայեցին նրանց կողմը։ Սեթոն հասավ ու բռնեց կարոյին։ Սա շուռ յեկավ ու սկսեց պաշտպանվել։ Սկսվեց կոխը։ Բոլորը շրջապատեցին նրանց և կնոջից հեռացան։

Սա նայեց նրանց և մի անասելի հաճույք դդաց, մոր հաճույքը խայտացող յերեխաների առջև։ Յեվ մի անգամ ել գորովանքով դիտեց նրանց ու հառաջեց։

Ապա վերադարձավ տուն։ Մոտենալով տանը, բաց չարեց դուռը, ներս չըմտավ։

Այնտեղ այլևս վոչ վոք չկար։ Նիկոլն այնտեղ չեր այլևս։

Մութն ընկնում եր։ Զայները լռեցին։ Միայն դեռ լսվում եր կարմիր բանակայինների անհոգ, յերիտասարդ աղմուկն ու յերգը։

## ԽՆԱՄԻՆ

Անկուսակցական կարապետյանը նոր եք աանդուխներից բարձրացել պատշգամբ, վոր յերեխաները պատուհանից տեսնելով նրան՝ ուրախ ծափ տվին.

— Քեռին յեկավ, քեռին։

Յեվ սենյակի դուանը շրջապատեցին նրան։

Կարապետյանը գրկեց նրանց, մտավ սենյակ։

— Բար' իրիկուն, խնամի։

Խնամին, մի պառավ կին, վոր շալը գլխին ծալապատիկ նստել կծկվել եր անկյունում նիբհող աչքերը բաց անելով՝ քնկոտ ժպտաց։

— Մկրտիչ, դժւ յես։ Բարով եկար։

Կարապետյանը վար դրեց ճամբի կապոցը և շուրջը նայեց։

— Ահա, Հրանտը տանն ե։

Ու նայեց անկողնի կողմը յերկարավիզ կոշիկներին, վոր զինվորական վերակուի տակից դուրս եյին ցցվել և դրվել աթոռի վրա։

— Հա։ Նոր յեկավ գեղեն, հաց կերավ պառկեց։

— Վորտեղ ե ծառայում։

— Յես գիտե՞մ, Վայեննի պուակուռոռ ե  
գյովա (իբր թե):

— Ասաց ու մի քանի խոսք դես դեն շուռ  
ու մոռ տալուց հետո շարունակեց.

— Բան կը ընաս հասկընա:

— Ինչի, խնամի, — հետաքրքրվեց Կարա-  
պետյանը:

— Դարդակ բան ե, ջանըմ: Հեծ միջեն չե:  
Հիմի վոչ պուակուռոռն ե պուակուռոռ, վոչ նա-  
չալնիկը նաշալնիկ, վոչ վայեննին վայեննի:

— Միթե: Բայց, խնամի, սրանց գործն ել  
ուրիշ տեսակ ե:

— Ի, դարդակ բան: Գործ, կերթան, դու-  
քան, կելնեն տախտակներուն վրան խոսին, հա-  
բանվոր, հա գեղացի, հա պատկոմ: Հեծ մեջը  
բան չեա—ել են 60 մանեթ ժալովնին ե, ել են  
չորս հինգ գրվանքա սապոն-մապոնը: Գործ: —  
Կափեկիմ կառնեմ:

Վերցնում ե թեշիկը և սկսում ե մանել:

— Խալիի տղեքը, ԵԵԵԵ, թուքյան-բա-  
զար սաբքեցին, մեկեն զյանգնցան (հարստա-  
ցան), գուրերնատի կյանք կանցնեն... Նարդի-  
վանենց Ակոփը կա, մաղազիա բացեց որ... ինչ  
երջանկության մեջ ե... սապոկներուն ձոճողը  
տեյմոր (մինչև) Պետրոպոլիկ ե հասե: Աս տղես-  
ե, — հայրական սեփական ջաղացը թողել ե գե-

Դը շներոց ու գելերոց: Խալիս կուտե, ինքը  
կաշե: Զանըմ, սուս, սուս, բայլշեիկին գլուխը  
խելք կա որ... Քամի յե: Թյություն ունիս:

— Պապիրոս ե, խնամի:

— Վնաս չունի, բեր:

Ու դառնացած ծխում ե ցուցամատի ու  
բթամատի ծայրով բոնած պապիրոսի կոթը:

— Ավալքու (առաջվա) վախտն եր: (Հա-  
ռաչում ե) Ափսոս չեր: Մենծ-պղտիկ կը ջոկ-  
վիր, Աստված կը ճանչեյին, թաղավորի պատիվ  
կար: Արզրումու կովին գնաց-եկավ՝ պալկովնի-  
կի չին ստացավ: Գյումրի յեր եկե: Տեսնեյիր՝  
պոյը պուսաթը, պալթոն, պլալուն կոճակները,  
չները: Փալովնան 4—5 հարուր մանեթ, թագա-  
վորի կյանք ուներ, թե են խելքին մնար: Հիմի  
վրան-գլուխն աշես, դենչիկի դըւդ ե:

— Ինչի, խնամի—ժպտում ե Կարապետ-  
յանը:

— Ինչի: Բալշեկիկ ե եղոր համար:

— Դաշնակցության ժամանակ ինչպես եր:

— Եհ, դաշնակներուն վախտն ե Աղպատպա-  
յու թուրքերն եյին: Հա ջարդ, հա փախ: Որը  
մի հավեմ կը փոխվիր: Մե վախտմ աշխարք իսա-  
ղաղեց: Վերջը խելքերուն ինչ փչեց, ինչ սա-  
տանա մտավ մեջները՝ աս բալշեկ եր, ինչ  
զուլում եր՝ բերին ույտուրմիշ (հնարեցին) երին:

ցկին խալիսի ջանը։ Ըսին՝ հիմի ամեն բան բար-  
շեիկ պիտի եղնի։ Աս բալշեիկն եկավ՝ արթը՝  
բալշեիկ—դաշնակ իրար խառնվան։ Ի՞նչ խելք  
եր՝ չըհասկըցանք։ Ջանըմ, յա բալշեիկ եղնի,  
յա դաշնակ—երկուսն ե հայ չեն։ Հա կոիվ, հա  
դալմաղալ, մարդ չըմնաց՝ չոլխավ, ունկոր չը  
մնաց աղքըցավ։ Կյոզալըմ քաղաքը քոռ ու  
փուչ երին բաց թողին։

— Եղպես, խնամի, ասելե հիմի ամեն բան  
վատ ե, — հազիվ ժաղտարվ հրահըում ե կարա-  
պետյանը։

— Իիի... կյանք ե։ (Ցույց ե տալիս յերե-  
խաներին)։ Խեղճ անասուններս վոտքերը ոտման  
չունին։ (Կանգ ե առնում և ձեռքի թեշիկը վայր  
դնում), Ե՛ հիշտեք սուրբ իրիկուն ե, մեղք ե։

Վեր կացավ ու գնաց դուրս։

— Երթամ սամավարին աշեմ։

Սենյակի լոռության մեջ լսվում եր յերե-  
խաների զրույցը, վոր ամեն ըոպե զրույցից  
անցնում եր վեճի և վեճից խաղաղ զրույցի։

— Դու բուրժուա յես, վոր եղպես ես ա-  
սում։

— Բուրժուան դու յես։

— Հաաա, յես ինչի յեմ բուրժուա։ Բուր-  
ժուան դու յես, վոր խոզի պես ես։

— Հա, խոզի պես ես։

### Լոռություն։

Ու կրկին։

— Դու բուրժուա տեսել ես, յես տեսել եմ։

— Ստլիկ, ինչի յես սուտ խոսում. բուր-  
ժուա վորտեղ կա, վոր տեսնես։

— Մեյդանի դասապը (մսագործ) բուր-  
ժուա չե։ Փորը հաստ։

— Խաչիկը ծիծաղում ե քրոջ վրա։

— Դմբն, դասապը բուրժուա յե։

Բուրժուան լրագրի մեջն ե լինում։ Այ  
բուրժուա—և ցույց ե տալիս պատից կախած  
լրագրի առաջին յերեսին Մուսովինի պատկերը։

Մոտենում են կարապետյանին։

— Գիտե՞ս, քեռի, մենք «անկյուն» ունենք։

— Ի՞նչ անկյուն։

— Լենինի անկյուն։

Յեվ յերեխաները ցույց են տալիս լրա-  
գրներից կտրած և պատերի անկյուններին փակ-  
ցրած պատկերներ՝ Լենինի, Մարքսի և Լյուք-  
սեմբուրգի, զտնազան աստղեր, դրոշակներ...։

Սամավարը յեկավ, բազմեց պատուհանին  
և սկսեց թշուալ մտերիմ, խաղաղ ձայնով։ Տիրեց  
քաղցը լոռություն։

Յերբեմն միայն յերեխաները ընդհատում  
եյին այդ լոռության միալար թելը։

Կարապետյանը մերթ լրագիր եր թերթում,  
մերթ դիտում սենյակը:

Կատարյալ անկարգություն։ Ռազմաճակատին մոտ վայրերի խառնափնթորություն։ Կայարան, վագոն, կարծես ամենքը պատրաստ են մեկնելու։ Յեվ կարապետյանը զգում եր, վորայո, ամեն բան մեկնում է։ Մեկնում ե, և միայն մի արարած կա, վոր պիտի մնա։ Պառավը...

Խարխուլ շենքի մոայլ յերկույթով նստած եր նա իր անկյունում և նայում իրենից հեռացող նոր կյանքի յետեից։ Ամեն բան փոխված եր։ Վորդին վորդի չեր, թոռները թոռ—աշխարքը աշխարք չեր, այլ ինչ վոր յերագ։

Առաջ յեկավ փոքրիկ Խաչիկը—տաս տարեկան մի չոտիկ տղա։

— Գիտե՞ս, քեռի, մամը չի հավատում վորաստված չկա։ Ենպես չե, քեռի, Աստված վոր լիներ։ Կերեար։ Զըկա վոր, չի յերկում։ Յես առում եմ, մամը թե՛ չե, Աստված կա։

— Հը, խնամի, Հըանտը առաջվա պես անաստված ե։

— Հըպը ինչ ե։ Ինքը ֆարմասոն, տղաներուն ել շինել ե ֆարմասոն։

— Քեռի, խոսում ե Խաչիկը—Լոլոն (ցույց ե տալիս 4 տարեկան աղջկան) Լոլոն կարող ե

յերդել «կորչի տերտերը»։ Ապա, Լոլո, յերդիր, ասա «կորչի տերտերը»։

— Սուս, սուս, մեղք ե—հանդիմանում ե խնամին։

Յերեխաները ծիծաղում են։

— Հիմի, Մկրտիչ ջան, — շարունակեց խնամին՝ նստելով սեղանի մոտ, — խոսքի՝ ինքը անաստված՝ անաստված։ Աս պղաըկներուն անաստված դարձնելն ինչ պատիժ եր։ Զանմ, չափը շատ անցուցին։

Մե մարդ մ ել դրել են, Զագսե, ինչ ե անունը։ Սուրբ պսակ կը քանդե, սահաթ գլուխ երիկ-կնիկ իրարմե կը բաժնե։ Աս եղավ քրիստոնեութեն։ Ետոնց Աստվածը Աստված չե, չի տեսնի։ (Հառաջում ե)։ Զե, կերթամ գեղ. ելի գեղականի քով Աստված կա, հավատ կա, կերթամ իմ մարդու ջաղացքը կընսաիմ։ Մարդս ջաղացքը մեռավ, յես ել ենտեղ կըմեռնեմ։ Իմ ապավենս առ ջաղացքն ե։

Մահճակալը ճոճոաց.

— Ոհո, Մկրտիչ, բարով ես յեկել։ Ու Հրանտը վեր կացավ նստեց մահճակալի վրա։ Աչքերը պղտոր, այրվում եյին, բայց ժըպտացին։

— Հը, հոգնած եյիր, — հարցրեց կարապետյանը։

- Գնացել եյի մեր գյուղը։ Մի պստիկ  
ջրաղաց ունեյի—«հայրական կալվածք»... կար-  
գադրեցի...  
 — Ե՛, վերջի, —անհանգստացավ խնամին։  
 — Տվի գյուղի գործկոմին կառավարելու։  
 — Գործկոմը վով ե։  
 — Մեր ընկերներից են։  
 — Ծո, կեցի, մեր գեղն ել բայլշեկ կա, —  
ցավելով զարմացավ խնամին։  
 — Ապա ի՞նչ, ժպտում ե Հրանտը։  
 — Լավ, —ու խնամին մտածմունքի մեջ  
ընկավ։ —Ափսոս։ Ե։ Եղածն եղած ե, հըմը եկող  
տարի հեջ մեկիմ չտաս. յես պիտի յերթամ կա-  
ռավարելու։  
 — Յեկող տարի ել գյուղգործկոմի ձեռին  
ելինելու։  
 Խնամին աչքերը չոեց.  
 Քա մեղա. եկող տարի յել պիտի մնան  
բալշեկները։  
 — Միշտ պիտի մնան, —ծիծաղում ե Հրանտը։  
 Ու հետո մեղմ ավելացրեց.  
 — Մշտական տվի գյուղգործկոմին, ուադ-  
արի պրծա, հասկացար։  
 — Բաշխեցիր։  
 — Հա։

- Վույ, ձունը զլխուս։ Գյողալըմ ջաղաց-  
քը։ Տեսար զուլումը։  
 Այդ ժամանակ հարսը ներս եր մտնում։  
 — Տեսար տնաքանդութենը, —դիմեց խնա-  
մին, —արի տես ի՞նչ ե երել մարդդ։  
 — Ի՞նչ ե արել։  
 — Աղջի, ջաղացքը բաշխել ե բալշեկնե-  
րուն։  
 Ու սկսեց ծնկները ծեծել։  
 — Պապական, հայրական մյուլքը մարդ իր  
ձեռքով վերցնե ուրիշին բաշխե։ Տեսար բալշեկ-  
նի խելքը... Ոչախս քանդվեց։ Վունշ...  
 Հրանտը ծիծաղում եր։ Հետո ձեռքերը շր-  
փեց և ուրախուրախ։  
 — Դե, թեյ բերեք, թել, վաղը ճամբորդ  
ենք։  
 — Ուր, —հարցրեց Կարապետյանը։  
 — Մոսկվա, դատախազների համագումա-  
րին։  
 Յեկեղեցու զանգերը ծլնկացին։ Նրանք  
շարունակվեցին մի պահ և ապա դարկելով վեր-  
ջին ակկորդը՝ լուեցին։  
 Խնամին վերցրեց շալը, զցեց գլխին և  
մոայլ, հուսահատ՝ շարժվեց դեպի դուռը։  
 — Ուր, —ժպտաց Հրանտը։  
 Խնամին չպատասխանեց։

— Առւս, — աչքով արավ հարսը, — գնում ե  
յեկեղեցի:

Խնամին դողդոջ քայլերով դուրս գնաց՝  
փարելու իր հավատի խարխուլ սյուներին.

## ԿՐԱՍՆԱՐՄԵՅՑՑԸ

— Բոնած գործերին մտիկ...

Ու Դային դուռը շրխկացնելով հյուրանոցի  
կորիդորից դուրս յեկավ դուռը:

Չարացած ե, պապիրոս ե վոլորում:

— Ի՞նչ ե պատահել, Դայի:

Աչքերը պսպղացրեց.

— Այժի կրասնարմեյց չըդառավ՝ խաթա  
դառավ գլխներիս:

— Սոկրատը:

— Պա յել հով։ Պերան ես գաստինիցեն,  
վոր պոլ սրբի՝ գլխիս խազեյին դառավ։ Վեր ա  
կացել թե ծառայողին ութը սահաթից ավել  
իրավունք չունես պանացնելու։ Սայուզին իմաց  
կըտամ։ Հա նավթը ավել ա գնում, փետը շատ  
վառեցիք, լամպչկեքը փչացնում եք։ Խե... Գըլ-  
խիս նաչալնիկ ես թե ջանդար։ Այժի պոլ սրբող  
ես՝ պոլդ սրբի։ Ես պոլիտիկի խաբարներումը  
դու ի՞նչ պեն ունես։

— Լավ, հիմի ի՞նչ եր ասում։

— Պրիկազներից ա խաբար տալիս։ «Մար-  
տիբոսին խե յես քու տան գործով բազար դար-

կել. սայուղի իրավունք չի: (Հառաջում ե) «Կիւլիսը» մեռնի Դայիի, պա մունք վոնց ենք արել: Ծառայողը վոր ութը սահաթ գործ անի՝ գործ շուռ կըդա: Ծառայող ե՝ ջանը դուրս գա պիտի բանի 10 սահաթ, 12 սահաթ, 15 սահաթ...

— Խորհրդային իշխանություն ե, Դայի, ուրիշ կերպ անկարելի յե:

— Հա, գիտում ընք, խորհրդային իշխանություն ա, համա բանի մեջ բան կա...

Բայց սրան բոլորովին համաձայն չե Սոկրատը, վոր հյուրանոց ե մտել «պոլ» սրբելու և կերակուր մատուցանելու: Գործը՝ գործ, բայց իր զինվորական սովորությունները հետն ե բերել:

Նախկին կծու «կրասնարմեյց» ե: Մասնակցել ե քաղաքացիական կոիմսերին և բանակը մի տարի յե, վոր թողել ե: Հիմի քաղաքացի Սոկրատ ե հյուրանոցում:

Խստակյաց ե, կատարյալ փուշ: Աչքն ամեն բանի վրա յե: Ամեն բանի վրա խոսում ե: «Նա չայ» մի առնեք, աղջիկների յետեկից մտիկ մի տաք, լրագիր կարդացեք, դասախոսություն գնացեք, պրոֆմիության շահերը պաշտպանեցեք: Մի ըոպե ավել աշխատեցիր, մի տառ շեղվեցիր պըծավ: Դաղում ե: Բայց ամենից շատ ընկած

ե Դայու յետեկից, վորը նախկին հյուրանոցատեր ե, հիմի հասարակ ծառայող:

— Սոկրատ ի՞նչ ե պատահել:  
— Քշել պիտի տամ:  
— Ո՞ւմ, այ տղա:  
— Այ եղ բանվորագյուղացիական թշնամուն:

— Ինչու:  
— Ելեմենտ ա, կոնտրընոլյուցիա յա անում:  
— Կոնտրընոլյուցիա:  
— Բայս: Հենց եսոր: Ծառայողների հետ վոլեկտիվ ժողով սարքեցի: Ասում ա եղ թողեք, պոյեղդի վախտ ա, պասաջիր կըդա: Այշի, գալում ա՝ գա: Նոմեր չի ուզածը: Կըտանք: Մենք մեր գործը գիտում ենք: Սա ջոկ, նա ջոկ: Ամադու չես իմանում. Նրա միտքը ուրիշ ա: Ուզում ա նվաճողական գործ բռնի: Կապիտալիստական աշքը Խորհրդային իշխանության վրա յա: Եղպես ա անում, վոր բանվորագյուղացիական ֆրոնտը թուլացնի:

Ու ահոելի բաշը թափ ե տալիս.

— Ամա աչքը հանելու յեմ: Կը թողամ վոր բանդիտիզմ անի: Ենդուր համար եմ ակոփների մեջ քաղաքացիական պատերազմ տվել, վոր սա եսպես սաբոտաժ բաներ սարքի: Դուրս եմ գըցել տալու եղ ոեժիմին:

իսկապես «խաթա»:

Բանակումք ե գնում, պրոֆմիություն, դասախոսություն, կինոյից ե խոսում, բուրժուաներից, բանվորներից:

Անցյալ որն ել թատրոն եր գնացել,  
Դային բերանը ծոմում ե.

— Մին հարցնող ըլի, սրա հինչ պեսն աթեատրը, յա կինոն, կլուբը... Այշի դու մելիք-կնյազի թռոն ես, նամեսնիկ ես, հինչ ես: Զոլի արձ, բաց թողնես՝ կնա սարիցը քար թոլ անի:

—

— Սոկրատ, ուրիշ ինչ կա, ինչ չկա:

— Իսկի: Լիկվիդացիա յեմ անում: Են աբոլոր գրերը գիտեմ, մնացել ե մի երկու հատ:

Վհրանեղից եր սովորել, ինչքան ժամանակ, բայց շուտով արդեն գիշերները ժամի 11-ին, 12-ին, սանդուղքից բարձրանալիս լսում եյի Սոկրատի ձայնը.

— Աաանգլի...ակաան պարլամեեենտում... ոոողային մինիստր Սամվել Հորնը...

— Սողոմոն իմաստունից անցկացար, — մըթմըթում եր Դային, — կազեթ կարթացողիս մտիկ, պրիֆիսոր ե դառել գլխիս: Կաց դու...

Բայց Սոկրատի պետքը չի: Աշխարք դրսութու հետ ե: Դուռն ել վոր դուրս ե գալիս՝ վայ-

թե պահակ գնացող մի նորավարժ կարմիր բանակային տեսնի.

— Ի՞նչ ես քոստքոստացնում, լավ վոտն արա, մեկ, յերկու... Ղամարլուի ֆրոնտում պիտի ըլեյիր, վոր քոստքոստը ցույց տայի քեզ...

Նորավարժը ժպտում ե ու անցնում:

Ու «խաթան» շվշացնելով ներս ե մտնում: Դային առաջն ե յելնում.

— Հը\*, ամանները սրբեցի՞ր:

— Սրբած ա... ու շվացնում ե:

— Դե հիմի վերևի պոլիրն ավլի:

— Ավլած ա... ու շվացնում ե, գնալով իր բանին:

— Լիրը, — մըթմըթում ե Դային նրա յետեղից ու ձեռները քամակին «տերողորմյան» քաշելով գնում դուրս՝ սիրտը թեթևացնելու:

Բայց խաթան հանգիստ չե: Մի շաբաթ ե ինչ վոր կոացել ե մի թղթի վրա: Ճկում ե, տնքում: Բան ե գրում կարծես:

— Սոկրատ, ինչ բանի յես:

— Զեկուցում ա: Պրոֆմիությանն եմ տալու, վոր մեր հյուրանոցի աշխատավորության շահերը պաշտպանի:

Մի շաբաթ ե, վոր Դային ել չի խոսում: Դեղնել ե, շրթունքները դողում են: Նկատողություն ե ստացել «վերևից» թե «Մարտիրոսին չի

կարելի մասնավոր գործով շուկա ուղարկել և  
ութ ժամից ավելի աշխատեցնել»:

— Նստի, Դայի, Հը, ի՞նչ կա:

Դային հառաջում ե ու նստում, Տերողոր-  
մյա յե քաշում և աչքերը թախծալի յերազանք-  
ներով հառում պատուհանից դուրս:

— Չորացած տառեխի յե նման:

— Ծ-ծ... Ե... Աշխարք ե... (աչքերը պըս-  
պղացնում ե)... Այշի, հիմի կասես թե սրանք  
բան են հասկանում...

— Ովքէր «սրանք», Դայի—դիտմամբ խո-  
սում եմ բարձր:

— Ես կոմունիստները, այշի...

— Դայի, եղակես մի խոսի, քեզ կըքոնեն:  
Կարծես մեկը գլխին բամփեց: Դային սըմ-  
քում ե, տաքուրետը մոտեցնում կոնսպերա-  
տիվ ձայնով.

— Հայ յես ել եդ եմ ասում: Ու չորս  
կողմն ե մտիկ տալիս:

— Այշի սրանց ի՞նչ պեսն ա գաստինիցա  
պահելը:

Ծխում ե, դառն կուլ տալիս ծովսն ու ձե-  
ռը ցայելով հառաջում.

— Պա մենք ել խաղելին ենք ելել, հունց

ենք արել: Հայ հայ... ի՞նչ գաստինիցա յեմ ու-  
նեցել: Պետքեպոլկի դվարեց...

Մին յերե՛ելի ստալավոյ ունեյի, վոր գու-  
բերնատորը, ներս մտնելիս մաթ եր մնում: Են  
հիանալի կարգ ու կանոնը, են կոխտա կերա-  
կուրները են կանֆետի պես աղջկերքը, Սերա-  
վիոն կասպարիչի տղերքը, Սափարողլու տղեր-  
քը, Միշեն, կոլյան, ի՞նչ քեփ անող, ուտող խը-  
մող տղերք եյին... Դիմով վիդով, կոյազի պես  
տղերք, մսխող... Փայտոնները ղարավուլի պես  
պաղեղղում կանգնած, սաղ քշերը քեֆ, մարա-  
քա, չախկարա, տանցեայթ...

Ծխում ե ու կարոտալից աչքերը գցում  
պատուհանից դուրս:

Հը... նոքար... Նոքարը կարար հակառակ  
խոսք ասի: Այ ըսենց բուանս միջին եր: Աչքերս  
վոր վրան մի հլորեյի՝ են ա, կըչորանար տեղն  
ու տեղը: Հայ գիդի Աբասթուման...

Ի հարկե չեմ հարցնում թե ի՞նչ բան ե  
այդ անհասկանալի Աբասթումանը:

— Հիմի ի՞նչ: Նոքարը նոքար չի, խաղեյի-  
նը խաղեյին: Բանի վոլորքը իսկի իմանում ը՞ն:  
Մինը նալին ա խփում, մինը մեխին: Քիմ-քիմա:  
Յեվ իբրև վերջին արգումենտ.

— Այշի մեկի անունը վոր Սոկրատ ըլի,  
ի՞նչ կըլինի:

Ճըրալով վեր ե կենում, մի յերկու տրոր-  
վում ե վոտի վրա և.—

— Իիի... «Գեթտի բյուլբյուլ, գեթտի  
դյուլ», «իստար աղլա, իստար գյուլ»\*:

Դուռը բաց արի ու ճամբու դրի վողբեր-  
գական Դայուն:

Կես գիշեր եր: Հյուրանոցը քնած: Դուրս  
յեկա կորիդորը: Ներքեխց պարզ լսվում եր Սոկ-  
րատի հեգելով ընթերցումը.

«Խը՛ Սը Հը Մը՝—յապոնական համաձայ-  
նագրի շուրջը»...

— Այ զահըմմար քեզ, քար ու քացախ,—  
մըթմըթաց Դային, —տես թող ա անում քի նո-  
մերի մարդը քնի...»

## ԿԱՅԱՐԱՆԻ ԱԿՈԲԸ

Դեռ գնացքին մի կտոր ժամանակ կա: Լուռ  
ե յերկաթուղու կայարանը: Հանգիստ քնած ե  
ուղտի ականջում:

Բայց Սկոբն արդեն պոստի վրա յե: Ցեր-  
կաթուղու պահակային զորամասից յեկել հսկում  
ե պլատֆորմին:

Ակո՞բը... Ուրիշ տղա յե: Ղարաչուխալու՝  
նոր մկրատի, վերջին կաղապարի:

Առողջ ինչպես կարմիր բողկ: Կայծերը կը  
հանի: Կաղմվածքն այնպես ե հիմնավոր ու պլա-  
նը պինդ գցած, վոր յերկու հարյուր տարի կը  
դիմանա:

Ցեվ ահա կանաչեզր զինվորական գդակը  
ծուռ դրած, հրացանը ուսին կախ, շալվարի տո-  
տերը անհնարին ուժերով պրկած յերկարավիզ  
կոշիկների մեջ—քնիթ, քնիթ—քայլում ե հետ ու  
առաջ: «Սապոկ»-ներ չեն, այլ զրահապատ գը-  
նացքներ, դրեղնոուտներ: Կրակի պես սրբոդ  
«Հիստիճին» անաստված պլազմբել ե...

Ճըրալով վողջ գավառում լսվում ե:

\* Գնաց բլբուլը, գնաց վարդը, կուզիս՝ լաց, կու-  
ղես ծիծաղիր:

Ահա հսկում ե, հետ ու առաջ մտիկ տալիս, սրա նրա ձեռքին նայում:

Գողություն «սեմուշկա» չըթել, պապիրոս, ձվի կճեպ նետել... Լուցկի վոր ընկնի վար՝ ձեռաց կիմանա պրոֆեսիոնալ ականջը... Խեթ խեթ մտիկ ե տալիս գցողի կողմն ու.

— Ընկեր, չի կարելի:

Արդեն ընազդորեն գիտե, թե այս ըոպեյիս ինչ ե կատարվում պլատֆորմի վրա, ներսը՝ կայարանում, բուֆետում... գավառում։ Գիտե, թեև իր գործը չե գիտենալը, թե ուր են գնում այսինչ վորրանոցի աշակերտները, վոր եքսկուրսիան կըհասնի այսոր։

Առավոտը ծեզը ծեզեց թե չե՝ Ակոբից իմացիր, թե քաղաքի վոր ճաշարանում ինչ քեփե յեղել և ում քիթն են ջարդել։ Արդեն լուսաբացից առաջ լսել ե «կողմերին»։ Ինչից ե թե ինչպես՝ թեև հետները գործ չունի, բայց քաղաքից ամեն մարդ, վոր դիպչում ե կայարան, պիտի տեսնի Ակոբին և մի բան պատմի։

— Ակոբ, յիրիգվա պոյեզդով դալթախչեցի Սերոբը չանցավ։

— Չե, յառավոտս պիտի դա, քթոցով հավկիթները ջարդել ե։

— Ծո դրհւատ, վայ իմանսըց։ Ե, ձենձոն քաղաքն ե։

— Նախճըվան գնաց։ Գալ շաբթու գուքա։  
— Քաղաքը ինչ կա։  
Հետո մտիկ ե տալիս Ակոբին վոտից գլուխ։  
— Ե՛, խո լավ լավ ես։  
— Զանսաղութեն, փափախիս տակը ման գուքամ։

Հարցնողին արդեն այդքանը բավական եւ Ակոբաչափով կարելի յե լավ իմանալ, թե ինչ կա գավառում։ Յեվ յերբ Ակոբը ասավ թե ամեն բան լավ ե, ասել ե աշխարքը իր տեղն եւ Այն ել ճիշտ ե, վոր Ակոբը ծառայության կանչվելով՝ պաշտոնապես կտրված ե քաղաքի կյանքին մասնակցելուց։

Գնացքի ժամանակը մոտենում ե։  
Ակոբը աչքը չորս ե անում, վոր մի անկարգություն վորսա։ Բայց անկարգությունը գնդակով չես կարող վայր գցել։ Զկա։

Մի եշելոն ե յեկել Յերևանից և կանգ առել կայարանից հեռու, կարմիր բանակայինները ցատկում-թռչում են վագոնները իրար բոթում, ծիծաղում։

Մի շոգեկառք գոմեշի պես տրլընգալով յետ ու առաջ ե շարժվում ու փնչացնում։ Մի քիչ հեռու չխչխկում ե դեպոն։ Կուպրի-նավթի հոտը սրվում, լողում ե ողի մեջ։ Կայարանից լրսվում ե հեռախոսի ճնկճնկոցը։ Ահա և քաղաքից

կառքեր են սլանում լեղապատառ՝ նահապետական փոշիների հանդիսավոր շքախումբը յետեները գցած։

Յեվ որը պլալում ե, ծիծաղում ինչպես կարմիր գաթա։

Կառքերը խցկվում են կայարանի յետենում, վեր են գալիս պատկոմներ, ապլաներ, կաշվեմարդիկ-խորհրդային ծառայողներ, ամերիկյան վորբանոցների սանուհիներ՝ ճերմակ բրդե գուլպաներով և ընդարձակ չուստերով։

Պլատֆորմը կենդանացավ։ Հետզհետե բազմությունը լցվեց, ժրեց, ու մոլտոցը գցեց։ Կայարանի ներսը մի դժվար ե, վոր կարծես կանանց ընդհանուր բաղնիս ե, կամ հրեաների սինագոգ։

Ահա մի խումբ տարբեր հասակի ապլաներ յեկան ու սերվիզի պես շարվեցին գծի հենց յեղբին։

Յերենում ե, վոր բնակչության այն խավերից եյին, վոր յերեք տարին մի անգամ հազիվ են գալիս կայարան։ Դսնավուր շորերով եյին։

Պառավերից մինը նայեց Ակոբին ու բռթեց մյուսին։

— Զանըմ, աս մեր Ակոբը չե՞։

— Ակոբն ե, հաստատեցին մյուս կանայք ու հետաքրքիր մտիկ տվին Ակոբին, վոր կանգ-

նած եր ինչպես ինքն Աքիլլես և հանդիսավոր հսկում եր։

Պառավերն սկսեցին դես-դեն մտիկ տալ։ Ինչ վոր արտակարդ հուզման եյին յենթարկվել, ընկնելով մի աղմկալի կենտրոն իրենց այն թաղից, վորի անդորրությունը խանգարողը լինում եր շատ շատ հարեան թաղից գաստրոլ յեկած մի աքլորի մենամարտ՝ աքլորական շուկայի ազդեցության գոտու համար կամ շների մի համառոտ գզվոտուք և կամ տղամարդկանց յերեկոյան զըռւյցը դայֆախանայի ցերեկվա զըռւյցի մասին և այն մասին՝ թե «կոպերատուրը» չիթը քանիսի յե բաց թողնում։

Հիմի ընկնելով այս կայարանը, մի ավելի վորո՞ց քան անորոշ յերկյուղով կանայք մտիկ եյին տալիս կայարանի իրարանցման։ Արդեն մարդիկ այնպես եյին վազվզում, կարծես բուլորը քաղաքից փախչում են։ Կայարանի դուռը բացվելիս ներսից պոռթկում ե տոմսակ առնողների խուճապ գցող մոլտոցը։ Իսկ հեռուն եշելոնն ե կանգնած՝ նա յել ե գնում...

Զանգը տվին (գնացքը դուրս ե յեկել վերջին կայարանից)։ Պլատֆորմը ջղայնացավ։

— Ակոբ ջան, աս զորքը կերթա, ինչի՞ կերթա, — անհանգստացավ պառավերից մինը։

— Բան չըկա, մերս, մի վախենա—«հասկանում ե» Ակոբը,—լազո կերթա:

— Հա, ոտացդ մեռնիմ... թե չե... Հաճգստանում ե պառավը:

— Ինչի՞ կանհանստանաս, մերս, աշխարքխո իրար չանցավ:

— Քա յես ի՞մ, տնեն դուրս եմ եկե՛ ղարիպի պես եմ: Ղարիպն ու քոռը մեկ ե:

Ու հանգստանում ե: Վորովհետեւ յերբոք Ակոբը ասավ՝ ել բավական ե. ասել ե աշխարքհանգիստ ե:

Ակոբը ամեն բան գիտեւ:

Պառավերը մտիկ են տալիս Ակոբին, վորպինդ կանգնած ե ինչպես հեղինակություն, սրածանը հրացանին, հաստ կոշիկներին ու լցվում գորովանքով:

Յերևանի գնացքն յեկավ, դղրդաց ու կանգնեց: Ապա սուլեց: Մարդիկ հարա տալով, բեռները առջնից-յետեկից կախ՝ խոյացան առաջ: Բեռները առաջ լողացին սառույց կոտրող նավերի պես: Հայրոյանք, հրմշտուք, հիմավոր հարվածներ ու բոթոցներ:

Պառամները շփոթվեցին և խուճապի մատնվեցին:

Բազմության միջից մի հասակավոր կին համարյա լացով վորոնում եր պառավերին, վո-

ըոնց գտավ վերջապես և ապա վազեց դեպի վագոնները:

Ակոբը գնաց նրա վրա.

— Ուր կերթաս, մերս, դիմեց տոպրակավոր կնոջը:

— Երեան կերթամ, տղես կարմիր բանակ ե:

— Կեցի.—ու Ակոբը յերկաթի պես բռնեց նրան,—Երեանու պոյեղուը աս չե: Յետ քաշվի, իմաց կուտամ:

— Հա, ոտացդ մեռնիմ:

Հանգստացան, տենչանքով նայեցին Ակոբին ու հառաչեցին.

— Ինձի չես ճանչե:

— Ինչի՞ չեմ ճանչե. Սեթոյի մերը չես: Ի՞նչ կենե Սեթոն, լավ ե:

— Ի՞նչ գիտնամ, նամակ եր եկե, հիվանդ ե: Պիտի երթամ տեսնեմ ի՞նչ ե եղեր:

— Ի՞նչ պիտի եղնի: Հիվանդ ե՝ կըլավնա, — վորոշում ե Ակոբը:

Կարմիր բանակայինի մայրը հարցական նայեց Ակոբին:

— Հը, Ակոբ ջան, հըճըփ պիտի լավսանեղձ անասունս—լացակումած հարցրեց մյուս պառավը, ըստ յերեսութին կարմիր բանակայինի տատը:

— Կըլավսա, մերիկ ջան, կըլավսա, հեչ  
դարդ մի ենե:

— Մեռնիմ իրեն. սուրբ Աստվածածնա  
խոստըցեր եմ, Մեթոս որ լավսա՝ գառմ սլիտի  
մատղեմ: Յեք որ կըսես կըլավսա, ըսել ե՞ կը  
լավսա:

**Ակոբը ավելի լրջացավ.**

— Զանըմ ինչի՞ պիտի չըլավսա: Սավետուկի  
իշխանություն ե, հեչ կըսանարմեյց կըթողնե  
վոր հիվընդնա, յա բան պատահի: Հետ, սրտերդ  
հանգիստ պահեք. հիմի բալշեփկի պուավիլները ու-  
րիշ տեսակ են:

**Պառավը ձեռքը բարձրացրեց աղոթքի:**

— Յառավոտ, յիրիգուն սուրբ Տիրամոր կը  
խնդրեմ՝ ինքը բարեխոս ըլի որ բալշեփկին սա-  
պոկը դայիմ կպած մնա մեր հողին վրա:

— Քա հըլպը՛թ որ, բալշեփկին պահողը  
Աստված ե, — ձայն պահեց կարմիր բանակայինի  
մայրը:

— Լուս իջնի լենինին գերեզմնին, սրբոց  
դասը դասվի, — շարունակեց առաջինը — ենիկ չեր  
որ քաղաքը պըծուց: Եեեե — սաղ աշխարք հա-  
ցը լցուց, լիացուց:

Մի խումբ յերիտասարդներ յեկան պլատֆոր-  
մի մյուս ծայրից թևերն իրար ուսով դցած: Յե-  
րեկի կամ ճամբու դնողներ եյին կամ պարապորդ-

ներ: Մոտենալիս լսելով պառամխերի և Ակոբի կը-  
րոնական զրույցը՝ նրանցից մինը մի ասեղ բայ-  
թողեց:

— Հը՞, Ակոբ, բանդ Աստվածածնա յե ըն-  
կե, կըոնական հարբեցողություն կենես:

— Կըոնական հարբեցողություն ենողը մըք-  
լած պապիկ տեսնեցիր — խեթեց Ակոբը — դու չե-  
յի՞ր որ զագս ու ժամ իրար խառնեցիր:

— Ծո, վով:

— Վով ըսողը:

— Երեսդ խաչ հանե: Յես ժամ եմ գնա-  
ցե թե զագս:

— Զագս... ճժե կռնըկիս: Գիտեմ ինչ զագս  
եր տերտերը գլխուդ վրա:

— Ծո, այ ողուլ, տերտերը զոքանչս բե-  
րեց, թե յես: Բարեկամ եր՝ կանչել են տուն  
քեփի, ինձի ի՞նչ:

— Հա, տերտերը բարեկամս եր, տիրացուն  
քեռուս տղեն, — ես մեկը նապաստակի ջուրն եր,  
են նապաստակի ջրի ջուրը: «Կըոնակոն հարբե-  
ցողություն»... քեփդ քյոք պահե, մենք ել ենք  
շուն կուլ տվե, ել եղ տեսակ բաներ չենք մարսեւ:

— Ապա ինչու մարսեցիր: Պառամխերը կո-  
մունիզմդ ժամ տարան բերին:

— Իմ կոմունիզմս ժամ չտարան: Կըս-  
նարմեյցի մեր ե, լեզուն եղան կըդառնա: Մի

վախենա, «սըբոց» ըսելով կենինը սըբոց չեղավ։  
Խոսելը մաս չունի—սիրտը մտքուր եղնի։ (Կար-  
միր բանակայինի մորը) ես կողմը կեցի, պոյեղ-  
դը կուգա, տակը չընկնիս։

Հանկարծ աչքը կարթեց մի բարձրահասակ  
յերիտասարդի, վոր տուն վերադարձած կարմիր  
բանակայինի շորեր ուներ հազին։

— Ընկեր, պլատֆորմի վրա չի կարելի  
աղտոտել։

— Յես չեմ աղտոտե, — հերքեց յերիտա-  
սարդը։

— Ատկազ ինչի կենես։ Քեզի կըսեմ մի  
աղտոտե՝ մի աղտոտե։

— Շառ ես, ծն—բողոքեց յերիտասարդը,  
Ակոբը հայացքը մեխեց նրա աչքերին։

— Դու կրասնարմեց եղել ես։

Յերիտասարդը չպատասխանեց և իր հերթին  
աչքերը չռելով նայեց Ակոբի աչքերին։ Հետո  
աքլորի պես։

— Դու ում կուռեցնես։

— Ուռեցնելս վորն եւ Պառյատկ նառուշիտ  
կենես ու հիմի յեկել ես աչքերուս մեջը կաշես։

Յերիտասարդը մի քիչ մրմռաց և նայեց  
ուրիշ կողմ։ Հետո գանգատվեց։

— Բերանդ մեզի վրա կըբացվի, այ ողուլ։  
Աչքդ ինձի տեսավ։

— Հա, աչքս քեզի տեսավ։ Սեմուշկա ին-  
չի կըչըթես։

— Յես եմ սեմուշկա չըթե, ըհը՛, սեմիչ-  
կա յե։

Բաց ե անում բուռը և ցույց ե տալիս  
լուցկին։

— Գիտեմ սեմուշկա չե, հըմը քանի ան-  
գամ նեսը չըթեցիր։ Աչքս չի տեսնի։ — համա-  
մառեց Ակոբը և հշացանի փոկը ուղղեց ուսի վրա։  
Յերիտասարդը հեռացավ ու գցեց։

— Կարմիր տաքաւեղ ես։

— Կարմիր տաքաւեղը յես չեմ, յետնից նե-  
տեց Ակոբը, — կարմիր տաքաւեղը պոավիլան ե։  
Ում դուռութմիշ կենես։

— Հը՞, Ակնը, խաշում ես հա, — ծիծաղելով  
անցավ մի բանվոր։

— Դաղում, ճենճերն ե հանում, խոսեց մի  
ուրիշ ծառայող ու գնաց նրա յետնից։  
Ակոբը շուռ յեկավ նրանց կողմը.

— Յես ի՞նչ, այ ողուներ։ Սլուժբա յե,  
մորքուրիս տղեն չե։

Հետո մի հավելված չորս կողմը հավաք-  
վածներին։

— Ղուռումսաղներ, ղայֆախսանա չե, պը-  
լատֆորմ ե։ Մեծ մեծ բրդելն ել նոր սորվաք,  
Խոսք ըմ կըսենք թե չե՝ թաքարլամիշ կենեք։

Մի յերեսը լպսուած նեպման, վոր նայում  
եր այս տեսարանին՝ մեջ մտավ և նկատեց  
Ակոբին.

— **Գիտես**, щарпн, ишашի ոԵժիմի ժամանակ ժանդարմանը շվելի вежливый **եյխ**, **Պետք** **ш**, ну, как там, сквозь пальцы надо смотреть.—**Ու գնաց**:

— ԽԵԼՔԻԴ պուտուկը սիրեմ. կոնտոռեվոլյուցիա, Սողոմոն իմաստունին թամքեցիր... կպցրեց Ակոբը, — Սավետսկի իշխանություն ե, ըսավ կտրեց: ՄԵՆՔ մեր ըանը լավ գիտենք:

— Թքեմ կրօնկիդ։ «Պալոն»։ Պարոնը գլուխ ջանգեցուր։

Վերջապես թիֆլիսի գնացքն յեկավ։  
Ակուն սպասեց, վոր յեկողներն իշնեն։ Հետո  
յերբ կարգն յեկավ նստելու, բռնեց կարմիր բա-  
նակայինի մոր թևից ու շոգեկառքի պես տա-  
րավ դեպի վագոնը.

— ՅԵԼ, ՆՍՏԻՇ ՀԱՆգիստ քԵզի համար, քու  
տանդ պԵս: Ստանցիները չի ջնես: Սեթոյին շատ  
բարեւ:

Կինը բարձրացավ, դռան մոտ շնորհակալ  
յեղավ ու ներս գնաց:

Արլաները քիթ ու մոռթները ծովոեցին,  
աչքերը տրորեցին ու կարմիր-բանակայինի մորն

ու նրա Սեթոյին Աստծուն հանձնելով զնացին  
կանգնեցին վագոնի պատուհանի տակ:

Գյուղացիք դուքս պոռթկացին կայարանի  
դռներից և այնպիսի մի վերջին դատաստանա-  
լին խուճապով ըռթեցին սրան-նրան, կարծես  
դա նրանց հատուկ պաշտոնն եր:

— Ուր, ուր, ուր կըքշեք—արգելեց մի  
վաճառական, եստեղ պլացկարտ ե:

— Պլացկաբտդ կռնըկին, — ասաց մի գյուղացի և ուսհվիրեց դեպի այլ վագոն, Մյուսները խուճապեցին նրա յետեից:

Գնացքը մեկնեց: Դարձյալ կաթվածն իջավ  
կայարանի վրա: Ճամբու դնողներն սկսեցին  
քաշվել:

Ակուբը նայեց գնացքի հեռացած կողմը,  
դասակն իջեցրեց աչքերին, հորանջեց. Ու աչքը  
մեքենաբար դարձրեց սրա-նրա վրա։ Յեվ ահա  
նկատեց մի «խուժան», վոր աչքը գետնին՝ պը-  
տըտվում եր զծի վրա մնացորդ վորոնելով։

Ակոբը նրան նշան բռնեց ու աչքերը խռժուեց վրան.

— Ծն, սալախանա շուն, Ելի եկար եստեղանները:

Խուժանն աշքի տակով նայեց Ակոբին ու  
շարունակեց վորոնելու:

— Ելի փախել ես մանկատնե՞ն,

— Տեղ չըկար:

— Տեղ կա, հըմը աչքդ գողության եւ Սորվել ես խոզի աղտի մեջ պառկելու: Դե հայդե: Ուզեց քացի տալ, բայց խուժանը սմքեց ու մնաց:

Ակոբը նայեց նրան, գլուխն որորեց ու վճռեց,

— Լավ: Եգուց արի կարոյի դուքանը, յես քեզի տանեմ դուրդար Պետրոսի քով—դուրդարութեն սորվե:

Տղան ըստ յերեսութին համոզվեց:


— Արհեստ սորվի, մուրալով, փախցնելով փո՞ք կըկշտանա: Առ, եսոր գնա կշտացի, եգուց արի:

Ու ձեռը գրպանը տանելով դուրս բերեց իր անդնդախոր պորտմանեն, կոշտ մատները կոխեց մեջը, հանեց յերկու պայտի չափ պղնձե շահանոցներ, յերկու խորհրդային կուշտ, առատ շահանոցներ և տվեց տղային.

— Դե, քելե, վազե, չափուկ:

Տղան ցեխոտ թաթը պինդ սեղմած, քիթը խպշտեց ու վազեց:

Ակոբը դես-դեն նայեց, աչք ածավ պլատֆորմին, հանեց գլխարկը, մազերը սղալեց ու քոթքոթացրեց կայարանի յետեւ:



A-i  
A-12333

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

1n.



## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

### ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ

1. Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ—Ծանոթներ, ժողովածու:
2. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ—Ժամանակակից Մելոդրամ:
3. Ա. ԶՈՐՅԱՆ—Հեղկոմի նախագահը:
4. Ա. ԶՈՐՅԱՆ—Գրադարանի Աղջիկը:

### ՄԱՆԿԱԿԱՆ

5. Ա. ԶՈՐՅԱՆ—Ելեքտրական լամպը, պատկերազարդեց Մ. Արուտչյան, գունատիպ:

### ՈՒՍՈՒՄԱՍԻՐԱԿԱՆ

6. ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ—Ալսեն Թռիմախյան: Հավելված.—Առաջին գաղափարական ավազակը հայոց մեջ.—Մերկեղուլարի Տեր-Մղբալս. 1791—1792 թ. թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0051347

